Արձանագրություն N 2

<< ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-16/4-3>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Գյումրի	21 հուլիսի 2016թ., ժամը՝ 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Սանոսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Հ. Ավետիսյան
	Ս. Պողոսյան
	Ա. Նալբանդյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Բադալյան

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեները, փվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Սանոսյան)

1.1 Գնման ընթացակարգը կատարվում է

ա. ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն: Այն է՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով ապրանքների գնման դեպքում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը պատվիրատուն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա Կարգով սահմանված պահանջներով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքած անձին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և կնքվելիք պայմանագրի փոփոխության նախագիծը: Եթե մասնակիցը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի փոփոխությունը, ապա այդ մասով պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է նախկինում կնքված պայմանագիրը՝ առանց պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

I. Դեղորայքի և պատվաստանյութերի քանակները ընդունել՝ 2016 թվականի տարեկան քանակներից նվազեցնելով 2016 թվականի 1-ին կիսամյակի ծախսված քանակները, ըստ չափաբաժինների:

II. Դեղորայքի և պատվաստանյութերի գնման նպատակով՝ ՇՀ ընթացակարգով կայանալիք <<ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-16/4-3>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից, որպես նախահաշվային գին ընդունվում է <<ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-16/4-1>> ծածկագրով կայացած մրցույթի գործող գները /մեկ միավորի գնի և նոր խմբաքանակի արտադրյալով/:

բ. Սահմանված կարգով ծանուցվել են <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

գ. Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

1	Թեոֆարմա ՍՊԸ	ք. Երևան, Գուսան Շերամի 92/3 հեռ. 010 72 08 80
2	Մագտոնի ՍՊԸ	ք. Երևան, Շիրվանզադե 15/32, հեռ. 010 23 26 69
3	Արֆարմացիա ՓԲԸ	ք. Երևան, Պուշկինի 56, հեռ. 010 53 22 61
4	Տոնուս-Լես ՍՊԸ	Ք. Երևան, Վարշավյան 2/1 հեռ. 093 11 44 44
5	Հերմինե Ֆարմեց ՍՊԸ	Ք. Երևան, Ավ. Ավետիսյան 76 բն. 17 հեռ. 094 27 74 00
6	Դիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ	ք. Երևան, Ղ Փարպեցու 22/14 հեռ. 010 54 44 06 /116/

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից

գրանցված մյուս կազմակերպությունների կողմից գնային առաջարկի ծրարներ չեն ստացվել:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

1.2. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության, ինչպես նաև հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Բոլոր ընկերությունների ներկայացրած ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և նրանցում առկա են հրավերով/ծանուցմամբ/ պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ դիմում շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու, հայտարարություն շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնային առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Փաստաթղթերը կազմված են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

1.3. Գնահատող հանձնաժողովի նախագահը և բոլոր անդամները հավաստում են, որ հիշյալ ընթացակարգի մասնակիցների հետ չունեն շահերի բախում:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

2. Մասնակիցների գնային առաջարկները

- ---

(Ա. Սանոսյան)

<<ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-16/4-3>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով ընթացակարգի մասնակից կազմակերպությունների գնային առաջարկները ներկայացվում են կից հավելված 1-ով/գնահատման թերթիկ/:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

3. 1-ին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում

(Ա. Սանոսյան)

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել

թիվ 1 չափաբաժնի մասով՝ <<Տոնուս-Լես>> ՍՊԸ-ին
թիվ 3, 22, 24, 39, 46, 58, 66, 75-78, 80, 84, 94, 98, 100 չափաբաժինների մասով՝ << Արֆարմացիա >> ՓԲԸ –ին
թիվ 5, 10, 13, 25, 36, 48, 52, 79 չափաբաժինների մասով՝ <<Թեոֆարմա>> ՍՊԸ-ին
թիվ 11, 32, 33, 45, 81, 82, 86, 87, չափաբաժինների մասով՝ <<Հերմինե Ֆարմեց>> ՍՊԸ-ին
թիվ 14, 19, 21, 26, 30-31, 50, 54, 56-57, 60, 64, 88, 89, 91-93, 95-97 չափաբաժինների մասով՝ <<Ռիխտեր-Լամբրոն>> ՀՁ ՍՊԸ-ին
թիվ 53 չափաբաժնի մասով՝ <<Մագտոնի>> ՍՊԸ-ին

2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել

թիվ 53 չափաբաժնի մասով՝ << Արֆարմացիա >> ՓԲԸ –ին
թիվ 1, 19 չափաբաժնի մասով՝ <<Հերմինե Ֆարմեց>> ՍՊԸ-ին
թիվ 13, 22, 75-78, 80, 94, 100 չափաբաժինների մասով՝ <<Ռիխտեր-Լամբրոն>> ՀՁ ՍՊԸ-ին

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

Թիվ 2, 4, 6-9, 12, 15-18, 20, 23, 27-29, 34, 35, 37, 38, 40-44, 47, 49, 51, 55, 59, 61-63, 65, 67-74, 83, 85, 90, 99, 101-103 չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, հետևաբար այն համարվում է չկայացած:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած ընկերությունների մասով 22.07.2016թ. ուղարկել հարցում ՀՀ Ֆինանսների նախարարություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:
Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձնաժողովը կմերժի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացնի հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ձևով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին.

(Ա. Սանոսյան)

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ <<ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-16/4-3>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ֆինանսների նախարարությունից եզրակացության ստացումից հետո, ժամը 11:00-ին՝ <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ում, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5 հասցեում:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Սանոսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Հ. Ավետիսյան
	Ս. Պողոսյան
	Ա. Նալբանդյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Բաղալյան